ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE REPUBLIC
OF ARMENIA
KHACHATUR ABOVYAN ARMENIAN STATE
PEDAGOGICAL UNIVERSITY

Email: info@aspu.am
Web: www.aspu.am

Հեռ/Tel.: 59-70-49
Fax.(3741) 59-70-01

Երևան-0010, Տիգրան Մեծի 17
Yerevan-0010, 17 Tigran Mets Ave.

N 22/08.1.6-604

«30» 05 2025թ.

ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ

Անժելա Շահջանյանին

(ՀՀ, Լոռի Արջուտ

Էլ. փոստ arev.arev.18@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված «ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-1» ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում 2025 թվականի փետրվարի 03-ին գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշմամբ գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ ընկերություն/: Պատվիրատուի և Ընկերության միջև 2025թ-ի մարտի 24-ին կնքվել է «ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-1» ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/:

«ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ին 2025թ-ի ապրիլի 10-ին ներկայացվել է Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման հայտ և Պատվիրատուն պահանջել է ներկայացնել նմուշներ՝ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական բնութագրի: Ներկայացված նմուշները հրավերի պահանջներին չէին համապատասխանում, որի համար կազմվել է բացասական եզրակացություն՝ 12.05.2025:

Հաշվի առնելով, որ Պայմանագրի 1.1 կետով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամի տնտեսական սպասարկման կենտրոնի 12.05.2025 թվականի գնման հայտով տրվել է ողջամիտ ժամկետ ապրանքների մատակարարման համար, վերջնաժամկետ՝ մինչև 19.05.2025թ ներառյալ, սակայն Կատարողի կողմից պարտավորությունները չեն կատարվել՝ էականորեն խախտելով Պայմանագիրը:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հաշվի առնելով, որ ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերոնշյալ իրավական հիմքով, ինչպես նաև հաշվի առնելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամի տնտեսական սպասարկման կենտրոնի 12.05.2025 թվականի բացասական եզրակացությունը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ի հետ 2025 թվականի մարտի 24-ին կնքված N ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-1 ծածկագրով պայմանագիրը՝ 283740 (երկու հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր քառասուն դրամ) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ելնելով վերոնշյալից՝ տեղեկացնում եմ, որ եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման և որակավորման ապահովման համար սահմանված գումարները՝ Պատվիրատուի Արարատբանկ ԲԲԸ՝ 1510002308480100 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.
- պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսական գնումների համակարգման և մատակարարման կենտրոնի գնումների համակարգող՝ Տ. Պետրոսյան, հեռ. +374 10 597086